«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2024-2025
Մաթեմատիկա (6-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Մաթեմատիկան թագուհին է բոլոր գիտությունների...

Կ. Գաուս

Մաղթում ենք հաջողություն:

1. Գրել այն ամենամեծ տասներկուանիշ թիվը, որը բավարարում է հետևյալ երկու պայմաններին. *(4 միավոր)*

- Թիվը գրառված է վեց հատ 5 և վեց հատ 7 թվանշաններով:
- Թվի գրառման մեջ չի հանդիպում 7555 թիվը:

2. Վարպետների խումբը կարող է 1 օրում կա՛մ շարել 12 մ^2, կա՛մ երեսպատել 15մ^2 պարիսպ: Որքա՞ն է պարիսպի մակերեսը, եթե խումբը 6 օրում այն և՛ շարել, և՛ երեսպատել է: *(4 միավոր)*

3. Աննայի հաշվիչի ստեղնաշարի մի ստեղնը չի աշխատում: Այսինքն՝ այն աշխատում է, երբ նույն թվանշանը սեղմում ես երկրորդ անգամ: Օրինակ՝ եթե չի աշխատում 4–ը և ցանկանում ես հավաքել 141454547 թիվը, ապա այդ հաշվիչի էկրանին հայտնվում է 1145547 թիվը: Մի անգամ Աննան փորձեց հավաքել մի տասանիշ թիվ, սակայն էկրանին հայտնվեց 5456186 յոթանիշ թիվը: Ստեղնաշարի ո՞ր թվանշանը ցույց տվող ստեղնը չի աշխատում: Պատասխանը հիմնավորել և գրել բլոր հնարավոր տարբերակները: *(4 միավոր)*

4. Չարաճճի տղան 38 հատ ատամի փայտիկները դասավորեց 3 x 5 չափի ուղղանկյան տեսքով (տես նկար 1-ը): Այնուհետև ուղղանկյան նշված երկու անկյունները վառեց: Հայտնի է, որ մեկ փայտիկը այրվում է 10 վայրկյանում: Քանի՞ վայրկյան կպահանջվի այս ամբողջ կառույցի այրման համար: (Հաշվի առնել, որ կրակը տարածվում է ատամի փայտիկներով հաստատուն արագությամբ: Կրակը շարունակում է տարածվել յուրաքանչյուր այրված փայտիկից դեպի բոլոր հարակից չայրված փայտիկները): *(4 միավոր)*



Նկար 1

5. Նկար 2-ում պատկերված է հինգ ընկերների տների դիրքերը և դրանք միացնող ճանապարհները: Պատկերված ճանապարհով Բագրատի տնից մինչև Կարենի տունը եղած հեռավորությունը 12 կմ է, Կարենի տնից մինչև Հովհաննեսի տուն՝ 10 կմ, Բագրատի տնից մինչև Հովհաննեսի տուն՝ 8 կմ, Աննայի տնից մինչև Կարենի տուն՝ 15 կմ, իսկ Կարենից Սոնայի տուն՝ 17 կմ: Որքա՞ն է պատկերված ճանապարհով Աննայի տնից մինչև Սոնայի տուն եղած հեռավորությունը: *(4 միավոր)*



Նկար 2